



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

Center for  
Responsible Mining

Հանքարդյունաբերության օրենսդրության  
բարեփոխման նախաձեռնություն

Աշխատանքային փաստաթուղթ 4  
Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ  
փաստաթղթերի շարք

# Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում

**Դոկտոր Վլադո Վիվոդա**

Քուինզլենդի համալսարան

Կայուն հանածոների ինստիտուտ

Հանքարդյունաբերության ոլորտում սոցիալական  
պատասխանատվության կենտրոն

**Դոկտոր Ջոնաթան Ֆուլչեր**

Քուինզլենդի համալսարան

Թ.Ս. Բիրնի անվան իրավաբանության բաժին

**Փետրվար 2017**

[mlri.crm.aua.am](http://mlri.crm.aua.am)

# Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում

Վլադո Վիվոդա և Ջոնաթան Ֆուլչեր (2017)

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք

Աշխատանքային փաստաթուղթ 4

Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն,

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

**Հիմնաբառեր`** Հանքարդյունաբերություն, Պատասխանատու, Հայաստան, Բնապահպանական ազդեցություն, Սոցիալական ազդեցություն

## Փաստաթղթերի շարքի և ՀՕԲԼ-ի մասին

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի այս շարքը պատրաստվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» (ՀՕԲԼ) ծրագրի շրջանակներում: ՀՕԲԼ-ը հնարավոր դարձավ **Թուֆենկյան» հիմնադրամի** ֆինանսական աջակցության շնորհիվ, նախաձեռնության նպատակն է երաշխավորել, որ հանքարդյունաբերությունը երկրին և տեղական համայնքներին տրամադրի բավարար օգուտներ: Նախաձեռնության նպատակներից է մշակել և Ազգային Ժողովի խմբակցություններին ներկայացնել այնպիսի օրինագծեր, որոնք կավելացնեն հանքարդյունաբերության տված հասարակական և տնտեսական օգուտները և միաժամանակ կնվազեցնեն շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա ունեցած բացասական ազդեցությունները: ՀՕԲԼ-ի գործունեության գլխավոր առանցքը քաղաքացիական հասարակության, շահերի պաշտպանության խմբերի, գիտական հաստատությունների և համապատասխան ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունն ու գործընկերությունն է: ՀՕԲԼ-ը համագործակցում է գործադիր և օրենսդիր մարմինների հետ` օրենքների նախագծերը ԱԺ-ում անցկացնելու համար: Ավելին իմանալու համար այցելե՛ք` <http://mlri.crm.aua.am>:

## ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի մասին

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՀԱՀ ՊՀԿ) հետազոտական աշխատանքի, կրթության և շահերի պաշտպանության միջոցով նպաստում է Հայաստանում սոցիալական, բնապահպանական և տնտեսական առումով պատասխանատու հանքարդյունաբերության` աշխարհում հայտնի լավագույն փորձի յուրացմանը, փոխանցմանն ու հարմարեցմանը: Այս նպատակին հասնելու համար ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը կներգրավի բոլոր շահագրգիռ կողմերին` բնապահպանական խմբերին, ֆինանսական հաստատություններին, հանքարդյունաբերության ոլորտի, քաղաքացիական հասարակության և պետական կառույցների ներկայացուցիչներին: Ավելին իմանալու համար այցելե՛ք` <http://crm.aua.am>:

## Ինչպես հղում անել այս զեկույցին

Վիվոդա, Վ. և Ֆուլչեր, Ջ. (2017): Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում (Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք, Աշխատանքային փաստաթուղթ 4, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն), ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան): Ներբեռնված է հետևյալ էլ. հասցեից` <http://mlri.crm.aua.am>:

## Ներածություն

Հանքարդյունաբերական նախագծերն առաջացնում են բազմաթիվ, դինամիկ և բազմաշերտ ազդեցություններ (դրական և բացասական, տես՝ Աղյուսակ 1): Դրական ազդեցությունների օրինակներն ընդգրկում են ճանապարհների վերանորոգումը, առողջապահական ծառայությունների ավելի լայն շերտ հասանելիությունը, նոր այգիներն ու հանգստի գոտիները, համայնքային կառույցների, կրթության և զբաղվածության հնարավորությունների ընդլայնում: Պոտենցիալ բացասական ազդեցությունները տարբեր են՝ հանցագործության մակարդակի աճից մինչև կենսապայմանների թանկացում (օրինակ՝ ծառայություններ, անշարժ գույք) և շնչառական առողջության հետ կապված ռիսկեր (օրինակ՝ բեռնատարների երթևեկության և փոշու պատճառով):

### Աղյուսակ 1. Հանքարդյունաբերական նախագծերի հետ ասոցացվող ազդեցություններ<sup>1</sup>

Դրական	Բացասական
<ul style="list-style-type: none"> <li>Բարելավված ենթակառուցվածքներ (օրինակ՝ ճանապարհներ) և ծառայություններ (օրինակ՝ ջրի հասանելիություն, էլեկտրոգիա, առողջապահություն)</li> <li>Առողջապահական ավելի լավ արդյունքներ շնորհիվ բարելավված ծառայությունների և կանխարգելման միջոցառումների:</li> <li>Աջակցություն կրթության համար, ավելի լավ ռեսուրսներ և կառույցներ:</li> <li>Չբաղվածության և բիզնեսի ավելի ընդարձակ հնարավորություններ բնական ռեսուրսների և կից այլ ոլորտներում:</li> <li>Բարձր եկամտային հոսքեր ռոյալթիների և փոխհատուցման վճարների միջոցով:</li> <li>Կենսապայմանների բարելավում՝ պայմանավորված եկամտի աճով</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Ֆիզիկական կամ տնտեսական տեղահանում կամ վերաբնակեցում:</li> <li>Արագ տնտեսական և սոցիալական փոփոխությունների արդյունքում տեղի ունեցող մշակութային արժեքների քայքայում:</li> <li>Հանածոների բաժանման և մշակման արժեքի և հանքարդյունաբերության հետ կապված այլ օգուտների (օրինակ՝ ռոյալթիներ, աշխատանք) շրջ սոցիալական կոնֆլիկտներ:</li> <li>Որոշ խմբերի առավել մարգինալացում:</li> <li>Համայնքի առողջության և սոցիալական (օրինակ՝ ակոհոլիզմ, թմրանյութերի օգտագործում, մարմնավաճառություն և դրամախաղեր) ու բնապահպանական (օրինակ՝ թունավորության բարձր մակարդակ, օդի և ջրի աղտոտվածություն, և այլն) խնդիրներով պայմանավորված ռիսկեր:</li> </ul>

<sup>1</sup> Աղապտացվել է Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի /ՅՄՄԽ/ (2016թ) [Good practice guide: Indigenous peoples and mining: good practice guide](#) փաստաթղթից և ՅՄՄԽ 2010թ [Good practice guidance on health impact assessment](#) փաստաթղթից:

<ul style="list-style-type: none"> <li>• Արդյունաբերական նախագիծն իրականացնողի աջակցությունը կառավարության սոցիալ-տնտեսական նախաձեռնություններում (օրինակ՝ համայնքային զարգացում, կրթություն, փոքր բիզնեսի զարգացում):</li> <li>• Շրջակա միջավայրի վերականգնում և պաշտպանական միջոցառումներ:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Մեծամասշտաբ և չվերահսկվող ներքի միգրացիա, որը նպաստում է ռեսուրսների և ծառայությունների (օրինակ՝ անշարժ գույքի, առողջապահության, կրթության և այլ ոլորտներում սոցիալական լարվածություն) համար պահանջի աճին:</li> <li>• Վարակիչ և այլ հիվանդությունների, հոգեկան խանգարումների, վթարների և վնասվածքների տարբեր աստիճանների ռիսկ:</li> </ul>
---	--

Ազդեցությունները կարող են լինել շոշափելի (աղտոտվածություն, կենսաբազմազանության կորուստ, առողջապահական ծառայությունների բարելավված հասանելիություն, ավելի լավ կենսապայմաններ, մատչելի անշարժ գույքի պակաս) կամ ոչ շոշափելի (հոգեկան սթրես՝ պայմանավորված այն համոզմամբ, որ շրջակա միջավայրը շարունակում է աղտոտվել կամ համայնքում սոցիալական ներդաշնակությունը արագորեն քայքայվում է արագ զարգացման և միգրացիայի պատճառով):<sup>2</sup>

Հանքարդյունաբերական նախագծերից բխող ազդեցությունները դժվար է կանխատեսել և ժամանակի ընթացքում կառավարել: Ազդեցության գնահատումը կառավարությունների, ընկերությունների և համայնքների կողմից կիրառվող մեթոդաբանություն է, որը նպատակ ունի բացահայտել և գնահատել նախագծի բնապահպանական, սոցիալական և առողջապահական ազդեցությունները և ապահովել, որպեսզի կառավարման և նվազեցման ռազմավարությունները նվազագույնի կհասցնեն վնասակար ազդեցությունները և կավելացնեն օգուտները նախագծի ազդակիր համայնքների և շրջակա միջավայրի համար:<sup>3</sup>

## Առկա իրավիճակը Հայաստանում

Հայաստանի արդյունաբերական ոլորտի բնապահպանական և սոցիալական կարգավորումները գլխավորապես հիմնվում են 2012թ-ին ընդունված *Ընդերքի մասին օրենսգրքի* և 2014թ-ին ընդունված *Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի* վրա: Վերջինս ընդգրկում է հանքի ողջ շահագործման ընթացքում, այդ թվում՝ փակման ժամանակ, շրջակա միջավայրի և մարդկանց վրա

<sup>2</sup> Burdge, R.J., & Vanclay, F. (1996). [Social impact assessment: a contribution to the state of the art series. Impact Assessment](#), 14(1): 59–86.

<sup>3</sup> Vanclay, F. (2003). [International principles for social impact assessment. Impact Assessment and Project Appraisal](#), 21(1): 5–11.

բացասական ազդեցությունների նախատեսման, կանխարգելման և նվազեցման ամենաժամանակակից հասկացությունները: Գնահատումների և փորձաքննությունների պատրաստման գլխավոր սկզբունքները համապատասխանում են կայուն զարգացման գաղափարներին:

Բացի ընդհանուր ՇՄԱԳ սկզբունքներից ու ընթացակարգերից, ՇՄԱԳ մասին օրենքը նաև ներկայացնում է ռազմավարական գնահատման հասկացությունը և սահմանում դրան ենթակա գործողությունները (ինչպես, օրինակ, հանքարդյունաբերությունը): ՇՄԱԳ մասին օրենքը ռազմավարական գնահատումը սահմանում է որպես առաջարկվող նախագծի հնարավոր գումարային ազդեցությունների գնահատման գործընթաց:<sup>4</sup>

Ընդերքի մասին օրենսգիրքը պահանջում է, որպեսզի հանքարդյունաբերական ծրագրի հայտ ներկայացնողներն ու շահագործողները իրականացնեն միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝ շրջակա միջավայրի պաշտպանություն, ջրային ավազաններ, հող, բուսական և կենդանական աշխարհ, և հարգել հատուկ պահպանվող ազգային պարկերի ռեժիմը: Ընկերությունները պարտավոր չեն իրականացնել սեփական գործունեության մշտադիտարկում: Ընդերքի մասին օրենսգիրքը այլ կանոնակարգումների համար հղում է կատարում այլ օրենքների, այդ թվում՝ ՇՄԱԳ մասին օրենքին:<sup>5</sup>

Սոցիալական ազդեցության գնահատումը (ՍԱԳ) ՇՄԱԳ մասին օրենքի և Ընդերքի մասին օրենսգրքի պահանջներից են: Պահանջները պետք է ընդգրկեն դրույթներ տեղական բնակչության սոցիալական պայմանները, զբաղվածությունը բարելավելու մասին և երաշխավորեն նրանց մասնակցությունը ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման նախաձեռնություններում որոշումների կայացմանը: Օրենսդրությունը սահմանում է, որ հանքարդյունաբերական պայմանագրերը պետք է ներառեն տեղական սոցիալ-տնտեսական զարգացման մասին դրույթներ: Այս դրույթները, սակայն, միայն «փորձարկվել են» Լիդիան Ինթերնեյշնլ ընկերության Ամուլսարի ոսկու հանքի նախագծի ՇՄԱԳ գործընթացի շրջանակում:<sup>6</sup>

Առողջության ազդեցության գնահատումը (ԱԱԳ) նույնպես պահանջների մաս է կազմում գործող օրենսդրության մեջ, որը պետք է իրականացվի ՇՄԱԳ գործընթացի շրջանակում: Սակայն ծրագրի հայտ ներկայացնողները ԱԱԳ չեն իրականացնում, քանի որ չկան համապատասխան ուղեցույցներ:

<sup>4</sup> Համաշխարհային բանկ (2016թ), [Armenia: Strategic Mineral Sector Sustainability Assessment](#), ապրիլ:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Տես՝ <http://www.lydianinternational.co.uk/reponsibility/esia> և <http://www.lydianarmenia.am/en/publications.html>:

Կա երկրորդային օրենսդրության և/կամ ուղեցույցների ընդհանուր պակաս ՇՄԱԳ օրենքի իրականացմանը նպաստելու համար: Անհրաժեշտ են ուղեցույցներ կամ մեթոդաբանություններ՝ բնապահպանական, սոցիալական և առողջապահական ազդեցությունները գնահատելու և ազդեցությունների գումարային գնահատում իրականացնելու համար: Սա մասնակիորեն պայմանավորված է նրանով, որ ՇՄԱԳ մասին օրենքը միայն վերջերս է ընդունվել:<sup>7</sup> Մանրամասն ուղեցույցների բացակայության պայմաններում հանքարդյունաբերական պայմանագրերը կարող են կարևոր դեր խաղալ լավագույն միջազգային բնապահպանական և սոցիալական փորձը որդեգրելու առումով:

## Միջազգային լավագույն փորձ

### Սկզբունքներ

Հանքարդյունաբերական շատ երկրներ ունեն կանոնակարգման ռեժիմ, որն ապահովում է բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատումն ու կառավարումը: Ըստ 2012թ-ին իրականացված ուսումնասիրության, աշխարհի 193 պետություններից 191-ում ինչ-որ տեսակի ՇՄԱԳ գոյություն ունի:<sup>8</sup> Սրա մեջ ընդգրկվում են իրավական պահանջներ իրականացնելու ՍԱԳ և ԱԱԳ որպես առանձին գործընթացներ կամ որպես բնապահպանական, սոցիալական և առողջապահական ազդեցությունների ինտեգրված գնահատման (ԲՍԱԱԻԳ) մաս: Դեպքերի մեծ մասում ՍԱԳ-ը և ԱԱԳ-ն ներառված են որպես ՇՄԱԳ-ի բաղադրիչներ:

Բնապահպանական, սոցիալական և առողջապահական ազդեցությունների գնահատումը եթե իրականացվի գրականության մեջ որպես «լավագույն փորձ» նշված չափանիշներին համապատասխան, ապա այն կունենա կայուն զարգացմանը նպաստելու ներուժ:<sup>9</sup> Այս աճող գրականությունը մանրամասն ուղեցույցներ ու ուղենիշներ է տրամադրում հանքարդյունաբերական գործունեության հետ կապված ազդեցությունների կառավարման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման միջազգային կազմակերպությունը /ՇՄԱԳՄԿ/ ազդեցության գնահատման գործում համաշխարհային առաջատար կազմակերպությունն է, որը միջազգային հարթակ է տրամադրում ազդեցության գնահատման հարցում առաջատար փորձի նորարարությունների և փոխանցման համար: Օրինակ, 2015թ-ին հրապարակված [Սոցիալական ազդեցության](#)

<sup>7</sup> Համաշխարհային բանկ (2016թ), [Հայաստան. հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում](#), ապրիլ:

<sup>8</sup> Morgan, R.K. (2012թ): [Environmental impact assessment: the state of the art](#). *Impact Assessment and Project Appraisal*, 30(1): 5–14.

<sup>9</sup> Esteves, A.M., Franks, D., & Vanclay, F. (2012). [Social impact assessment: the state of the art](#). *Impact Assessment and Project Appraisal*, 30(1): 34–42.

գնահատում. Նախագծերի սոցիալական ազդեցությունների գնահատման և կառավարման ձեռնարկում<sup>10</sup> մանրամասն ներկայացվում են խորհուրդներ ՍԱԳ գնահատման հարցում լավագույն փորձի վերաբերյալ, ինչպես նաև նախագծերի լրացվող կառավարման մասին՝ նպատակ ունենալով արձագանքել սոցիալական հետևանքներին: Ձեռնարկը լայնորեն գործածվում է պետական կանոնակարգող մարմինների, միջազգային ֆինանսական համայնքի, հասարակական կազմակերպությունների և ազդակիր համայնքների ներկայացուցիչների կողմից հանքարդյունաբերական նախագծերից առաջացող սոցիալական խնդիրների կառավարման առումով ցուցանիշների գնահատման համար:

### Հիմունքներ

Առաջատար փորձը, որը նախկինում ընկալվում էր որպես նախքան ծրագրի իրականացումը հնարավոր ազդեցությունների կանխագուշակման գործիք, ներառում է վնասակար ազդեցությունները նվազեցնելու ռազմավարություններ և հանքարդյունաբերական նախագծերի հետ առնչվող օգուտների ընդլայնում: Ազդեցության գնահատումը առավելագույնս արդյունավետ է լինում որպես կրկնվող գործընթաց մշակման ողջ ընթացքում, այլ ոչ թե որպես մեկանգամյա գործողություն ծրագրի մեկնարկի ժամանակ:<sup>11</sup> Առաջատար փորձը մասնավորապես կառավարման համակարգերի և ռազմավարությունների կիրառումն է, որը թույլ է տալիս մշտադիտարկել, զեկուցել գնահատել, վերանայել և ակտիվորեն արձագանքել փոփոխությունների ծրագրի ողջ ընթացքում, իսկ հանքարդյունաբերության դեպքում՝ մինչև փակում:<sup>12</sup> Գործունեության համապատասխանեցումը տարածքային և/կամ համայնքային պլանավորման նպատակների հետ, բազմաթիվ նախագծերի գումարային ազդեցությունների դիտարկումը և համայնքային իմաստալից մասնակցությունը որոշումների կայացման գործում առաջատար փորձի կարևոր հիմունքներն են:

Շահագրգիռ կողմերի մասնակցությունը որոշումների կայացմանը ազդեցությունների գնահատման գործընթացի ժամանակ շատ կարևոր է գնահատումների որակը բարելավելու և սոցիալական հավանության արժանանալու առումով: Ազդեցությունների

<sup>10</sup> Vanclay, F., Esteves, A.M., Aucamp, I., & Franks, D. (2015թ): [Social impact assessments: guidance for assessing and managing the social impacts of projects](#): Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման միջազգային կազմակերպություն:

<sup>11</sup> Franks, D. (2012թ): [Social impact assessment of resource projects](#): Միջազգային հանքարդյունաբերություն հանուն զարգացման կենտրոն, Հանքարդյունաբերություն հանուն զարգացման, Ավստրալական փորձի ուղեցույց:

<sup>12</sup> Franks, D., Brereton, D., Clark, P., Fidler, C., & Vanclay, F. (2009թ): [Leading practice strategies for addressing the social impacts of resource developments](#): Հանքարդյունաբերության ոլորտում սոցիալական պատասխանատվության կենտրոն, Կայուն հանածոների ինստիտուտ, Զուլինգլենդի համալսարան: Չեկույց զբաղվածության, տնտեսական զարգացման և նորարարությունների գործակալության համար, Զուլինգլենդի կառավարություն: Միջազգային ֆինանսական կորպորացիա /ՄՖԿ/ (2012թ): [IFC performance standards on environmental and social sustainability](#): Համաշխարհային բանկ:

գնահատման գործընթացը ամենաշատ օգուտը բերում է ազդակիր բնակչությանը, եթե այն ուղեկցվում է համայնքային մասնակցության մոտեցմամբ (Շահագրգիռ կողմերի և ծրագրի ազդակիր մարդկանց միջև գլխավոր տարբերությունների և սահմանումների համար տես՝ Վանդակ 1):<sup>13</sup>

### **Վանդակ 1: Շահագրգիռ կողմեր և ազդակիր համայնքներ**

**Շահագրգիռ կողմերը** անհատներ են կամ խմբեր, որոնք ծրագրի ազդեցությունների ուղղակի կամ անուղղակի կրողներն են, այդ թվում՝ նրանք, ովքեր կարող են որոշ շահեր ունենալ ծրագրից և/կամ կարողանալ ազդել վերջինիս արդյունքների վրա դրականորեն կամ բացասական կերպով: Շահագրգիռ կողմեր կարող են լինել ազդակիր համայնքները կամ անհատները կամ նրանց պաշտոնական և ոչ ֆորմալ ներկայացուցիչները, պետական կամ տեղական իշխանությունները, քաղաքական գործիչներ, կրոնական առաջնորդներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և հատուկ շահեր ունեցող խմբեր, կրթական համայնքը և տարբեր բիզնեսներ:<sup>14</sup>

Այս տարբեր անհատների կամ խմբերի «շահը» ծրագրում կարող է տարբեր լինել: Օրինակ, ազդակիր շահագրգիռ կողմերից որոշները կարող են լինել ծրագրի պոտենցիալ սոցիալական ազդեցության ուղղակի կրողներ, իսկ այլ շահագրգիռ կողմեր կարող են լինել այլ բնակավայրերի, մարզերի կամ երկրի բնակիչներ, սակայն ցանկանալ ծրագրի հայտ ներկայացնողին հաղորդել իրենց մտահոգությունները և առաջարկությունները: Ավելին, կան շահագրգիռ կողմեր, ովքեր կարող են կոնկրետ ազդել ծրագրի վրա: Այդպիսիք են պետական կանոնակարգող մարմինները, քաղաքական կամ կրոնական գործիչները և համայնքի այլ ակտիվ անդամներ: Կան նաև շահագրգիռ կողմեր, ովքեր իրենց գիտելիքի կամ դիրքի շնորհիվ կարող են դրականորեն ազդել ծրագրի վրա, օրինակ, հանդես գալով որպես վստահելի միջնորդ հարաբերությունների հաստատման գործում:

**Ծրագրի ազդակիր բնակչությունը** բոլոր այն անհատներն և խմբերն են, որոնք իրենց վրա զգալի չափով կրում են ծրագրի գործունեության ազդեցությունները:<sup>15</sup>

Ըստ Միջազգային հանքարդյունաբերություն հանուն զարգացման կենտրոնի /ՄՀՀԶԿ/ կողմից պատվիրված մի գեկույցի առաջատար փորձը հիմնվում է այնպիսի համակարգերի և շրջանակների վրա, որոնք ընդգրկում են հետևյալը.

<sup>13</sup> Kemp, D., & Owen, J.R. (2013թ): [Համայնքային հարաբերությունները և հանքարդյունաբերությունը. բիզնեսի կարևոր մաս, բայց ոչ «կարևոր բիզնես»:](#) *Ռեսուրսների քաղաքականություն*, 38(4): 523–31:

<sup>14</sup> Միջազգային ֆինանսական կորպորացիա /ՄՖԿ/ (2007թ): [Շահագրգիռ կողմերի ներգրավում. լավ փորձի ձեռնարկ զարգացող շուկաներում բիզնես ծավալող ընկերությունների համար:](#) Համաշխարհային բանկի խումբ:

<sup>15</sup> Համաշխարհային բանկ (2012թ): [Հանքարդյունաբերական համայնքի զարգացման համաձայնագրեր. ընտրանի](#), մարտ:



- *Կյանքի ցիկլի մոտեցում*. ծրագրի պատասխանատուները բացահայտում և արձագանքում են բնապահպանական, սոցիալական, առողջապահական ազդեցություններին հանքարդյունաբերական գործունեության բոլոր փուլերում, այդ թվում՝ դրա ավարտից հետո:
- *Ներգրավում*. ծրագրի պատասխանատուները պարբերաբար հանդիպում են համայնքի և կառավարության ներկայացուցիչների հետ՝ որոշելու այն ակտիվ գործընթացների առաջնահերթությունները, որոնք պահանջում են համայնքի մասնակցությունը որոշումների կայացման գործում:
- *Գործընկերություն և համայնքային կարգացում*. ծրագրի պատասխանատուները գործընկերային հարաբերություններ են հաստատում ազդակիր համայնքների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ նպատակ ունենալով անդրադառնալ մտահոգիչ և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի և մշակել երկարաժամկետ հատվածում հանայնքի դիմացկունությանն աջակցող ռազմավարություններ:
- *Գումարային ապդեցությունների համակարգում*. միևնույն տարածքում գտնվող տարբեր ծրագրերի պատասխանատուներ միասին են իրականացնում գումարային ազդեցությունների կառավարման, մշտադիտարկման և նվազեցման աշխատանքների համակարգումը:
- *Լրացվող կառավարում և ճկունություն*. ծրագրի պատասխանատուները ակտիվորեն մշտադիտարկում և արձագանքում են փոփոխվող հանգամանքներին և ազդեցությունների աճի մասին տեղեկություններին:<sup>16</sup>


## Ընթացքը

Ազդեցության գնահատման գործընթացը բաղկացած է բազում գործողություններից կամ առաադրանքներից: Իրականացվելիք գործողությունների ընտրությունը ունի կոնտեքստային նշանակություն և հիմնվում է ծրագրի կոնկրետ պահանջների վրա (գործողությունների հավանական ցանկի համար տես՝ Պատկեր 1):<sup>17</sup>

## Պատկեր 1. Բնապահպանական, սոցիալական և առողջապահական ազդեցությունների գնահատման փուլերն ու գործողությունները

<sup>16</sup> Franks (2012թ), էջ 8:

<sup>17</sup> Յուրաբանյուր գործողության համար լրացուցիչ մանրամասների համար տես՝ Vanclay և այլք (2015թ), էջ 36–63:



Գործողություններն իրականացվում են քանակական և որակական հետազոտության մեթոդների և գործիքների կիրառմամբ: Մեթոդների ընտրությունը կախված է այն բանից, թե ինչը պետք է չափել և որոնք է ազդեցությունների գնահատման ընդհանուր նպատակները: Տարբեր մեթոդներ և գործիքներ միավորող ինտեգրացված մոտեցումը ապահովում է ազդեցությունների և դրանց նվազեցման ու կառավարման ռազմավարությունների ամենահամապարփակ և վստահելի կանխատեսում (լրացուցիչ մանրամասների համար տես Վանդակ 2):

**Վանդակ 2. մեթոդներ, մոտեցումներ և տեղեկատվության աղբյուրներ**


Ազդեցության գնահատման վերլուծական աշխատանքների մեծ մասը կենտրոնանում է գլխավոր փոփոխականների հավանական փոխման մասին կանխատեսումների վրա՝ կիրառելով քանակական և որակական հետազոտության մեթոդների և գործիքների լայն տեսականի: Կիրառվող գործիքներն ու մեթոդները սովորաբար ներառում են (սակայն չեն սահմանափակվում) հետևյալը՝

- *Միտումների արտակումներ /էքստրապոլյացիա/*. առկա բնապահպանական, սոցիալական և առողջապահական միտումների պրոյեկտումը հետագայի վրա:
- *Բնակչության փոփոխություններ*. բնակչության թվի փոփոխությունները կիրառվում են որպես գործակիցներ այլ ցուցիչների (կենսաբազմազանություն, զբաղվածության կամ անշարժ գույքի պահանջ, ենթակառուցվածքներ և առողջապահական ծառայություններ) փոփոխության համար:
- *Փորձագիտական խորհրդատվություն*. փորձագիտական գիտելիքների կիրառում, օրինակ շրջակա միջավայրի, սոցիալական և առողջապահական մասնագետների,

- պրոֆեսիոնալ խորհրդատուների, տեղական/տարածքային իշխանությունների կամ գիտակ քաղաքացիների հետ խորհրդատվություն:
- *Սցենարներ*. հավանական, այլընտրանքային կամ էկոհամակարգի, համայնքի կամ հասարակության համար նախընտրելի ապագայի զարգացման վարժություններ: Սրանք կարելի է օգտագործել տարբեր արդյունքներ համեմատելու համար (լավագույն տարբերակ, վատագույն տարբերակ):
  - *Համեմատական ուսումնասիրություններ*. հետազոտել, թե ինչպես է էկոհամակարգը կամ ազդակիր համայնքը փոփոխություններին արձագանքել անցյալում կամ ուսումնասիրել նմանատիպ գործունեության միջով անցած այլ էկոհամակարգերի և համայնքների վրա թողնված ազդեցությունը:

Առաջատար փորձը նպատակ է դնում ստանալ առավելագույն դրական արդյունքներ և նվազագույնի հասցնել վնասը՝ կիրառելով լրացվող մասնակցական կառավարման մոտեցումը, որտեղ ազդեցության գնահատումն ընկալվում է, որպես սովորելու գործընթաց, որի ժամանակ սկզբնական ենթադրություններն ու նախնական ընկալումները պետք է պարբերաբար թարմացվեն՝ հիմնվելով նոր տվյալների և ազդակի համայնքների ու այլ շահագրգիռ կողմերի հետ ընթացիկ խորհրդատվությունների վրա: Բնապահպանական, սոցիակալան և առողջապահական ազդեցության գնահատման գործընթացը, հիմնված լրացվող մասնակցական կառավարման մեթոդի վրա, կարող է բաժանվել կոնցեպտուալ առումով տարբեր, սակայն ինտերակտիվ փուլերի (Պատկեր 2):

**Պատկեր 2. ՍԱԳ փուլերը ինտերակտիվ լրացվող կառավարման գործընթացում**<sup>18</sup>



<sup>18</sup> Վերցվել է Ֆրենկսից /Franks/ (2012թ), էջ 6:

## Լրացուցիչ փաստաթղթեր, պլաններ և ռազմավարություններ

Իրականացման ուղեցույցներն անդրադառնում են բնապահպանական, սոցիալական և առողջապահական գնահատման ծրագրի և դրա բոլոր փուլերի մակարդակում: Ուղեցույցները հաճախ բարելավում են ազդեցության գնահատման արդյունավետությունն ու որակը՝ տրամադրելով հետևյալը.

- Ազդեցության գնահատումը պատրաստելու համար անհրաժեշտ մանրամասն տեխնիկական տեղեկություններ:
- Պլանավորման գործընթացում շահագրգիռ խմբերի ներառման և/կամ դասակարգման չափանիշներ:
- Տեղեկություններ ազդեցության գնահատման գործընթացի մասին, պատշաճ մեթոդներ և ակնկալիքներ:
- Երաշխիք այն մասին, որ համայնքի ներգրավումն ու մասնակցությունը ներառված են ազդեցության գնահատման բոլոր գործողություններում:
- Տեղեկություններ կից պլանների և ռազմավարությունների մասին, ինչպիսիք են բնապահպանական, սոցիալական և առողջապահական պլանները:

Օրինակները հնարավոր է տեսնել հետևյալ հղումներով՝ Եվրոպական հանձնաժողով ([ուղեցույցներ](#), [ուղղորդում](#)), [Գրենլանդիա](#), [Հյուսիսային տարածքներ](#) (Ավստրալիա) և [Ըուինսլենդ](#) (Ավստրալիա):

Ուղեցույցների առկայությունն անպայմանորեն չի հանգեցնում հաջող փորձի:<sup>19</sup> Տվյալ համատեքստին և հանգամանքներին համապատասխան գործիքների և գործընթացների կիրառում առաջարկելը կարող է տեղին չլինել այն դեպքում, երբ գործողությունն իրականացնողները չունեն բավարար փորձառություն նման որոշումներ կայացնելու համար: Այդ դեպքերում անհրաժեշտ են ավելի մանրամասն գործառնական ուղղորդումներ, թե ինչպես պետք է կատարել որակյալ մեթոդաբանական ընդդրություններ և ընտրել լավագույն հասանելի մեթոդները:<sup>20</sup>

Վերջին տասնամյակի ընթացքում բնապահպանական, սոցիալական և/կամ առողջապահական կառավարման պլանները սկսել են հանդես գալ որպես կենսական կապ ազդեցության գնահատման, ընթացիկ կառավարման և բնապահպանական, սոցիալական և առողջապահական խնդիրներին ակտիվ կերպով արձագանքելու միջև:<sup>21</sup> Այս պլանները կառավարումը նկարագրում են որպես գործողություններ, որոնք

<sup>19</sup> Morgan (2012թ), Adelle, C., & Weiland, S. (2012թ): [Policy assessment: the state of the art](#): *Ազդեցության գնահատում և ծրագրի գնահատական*, 30(1): 25–33:

<sup>20</sup> Noble, B., Gunn, J., & Martin, J. (2012թ): [Survey of current methods and guidance for strategic environmental assessment](#): *Ազդեցության գնահատում և ծրագրի գնահատական*, 30(3): 139–47:

<sup>21</sup> Այս պլանները կոչվում են սոցիալական կառավարման պլաններ, սոցիալական ազդեցության կառավարման պլաններ, բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ, սոցիալական և զբաղվածության պլաններ, բնապահպանական և սոցիալական գործունեության պլաններ:

կարող են իրականացվել ծրագրի ցանկացած փուլում՝ նպատակ ունենալով խուսափել կամ նվազեցնել ազդեցությունները և առավելագույնի հասցնել օգուտները: Կառավարությունները և ֆինանսական հաստատությունները, ինչպիսին է, օրինակ, Միջազգային ֆինանսական կորպորացիան /ՄՖԿ/, գնալով ավելի շատ են կիրառում կառավարման պլանները որպես ծրագրի հաստատման և ֆինանսավորման պահանջ:<sup>22</sup>

Կառավարման պլանները կարող են մշակվել կանոնակարգող գործակալությունների և համայնքների հետ համատեղ և կսահմանեն յուրաքանչյուր կողմի պատասխանատվությունները ազդեցությունների, հնարավորությունների և ռիսկերի կառավարման հարցում: Դրանք կարող են լինել այն գործիքը, որի օգնությամբ հնարավոր կլինի համակարգել ծրագրի գործողությունները կառավարության պլանավորման հետ, կապ հաստատել տեղական և տարածքային պլանավորման գործընթացների միջև: Եթե կառավարման պլանները մշակվել են հղում կատարելով այլ ծրագրերի պատասխանատուների կառավարման պլաններին, ապա դրանք կարող են նաև աջակցել գումարային ազդեցությունների կանխատեսման և կառավարման հարցում:<sup>23</sup> Շատ վայրերում գումարային ազդեցության գնահատումը մնում է թերզարգացած:<sup>24</sup>

ՍԱԳ-ի և ԱԱԳ-ի անհրաժեշտությունն առաջացել է, քանի որ սոցիալական և առողջապահական խնդիրներին պատշաճ կերպով անդրադարձ չի կատարվել ՇՄԱԳ-ի միջոցով և առաջացել է դրանք վերլուծելու տարբեր մեթոդների կարիք: Սակայն շատերը պնդում են, որ ՍԱԳ-ի և ԱԱԳ-ի ներուժը հիմնականում շարունակում է չիրագործվել:<sup>25</sup> Ինչպես արդեն նշվել է շատ դեպքերում ՍԱԳ-ն ու ԱԱԳ-ն ՇՄԱԳ-ի բաղադրիչ մասեր են և որպես այդպիսին շարունակում են մնալ ՇՄԱԳ-ին ենթակա ենթաբաժին, որն ամբողջապես չի համաատասխանում միջազգային սկզբունքների և ուղեցույցների սկզբունքներին: Օրինակ, վերջերս կատարված հետազոտություններից մեկը ցույց է տալիս, որ ՍԱԳ-երի դերը ՇՄԱԳ մասին զեկույցներում շատ փոքր է և կազմում է ընդհանուր էջերի չորսից հինգ տոկոսը:<sup>26</sup>

Հետազոտությունները ցույց են տալիս որ ՍԱԳ-ն ու ԱԱԳ-ն որպես ՇՄԱԳ-ի ենթակա մասեր ներառելու մոտեցումը ընդհանուր առմամբ ընթացակարգային է և հաճախ չի

---

<sup>22</sup> Տես ՄՖԿ Կատարողական չափանիշ 1: Միջազգային ֆինանսական կորպորացիա /ՄՖԿ/ (2012թ): [Բնապահպանական և սոցիալական կայունության մասին ՄՖԿ կատարողական ստանդարտներ:](#)

Համաշխարհային բանկի խումբ:

<sup>23</sup> Ֆրենկս /Franks/ և այլք (2009).

<sup>24</sup> Morgan (2012թ):

<sup>25</sup> Prno, J., & Slocombe, D.S. (2012). [Exploring the origins of 'social license to operate' in the mining sector: perspectives from governance and sustainability theories:](#) *Ռեսուրսների քաղաքականություն*, 37(3): 346–57:

<sup>26</sup> Suopajärvi, L. (2013թ): [Social impact assessment in mining projects in Northern Finland: comparing practice to theory:](#) *Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուսումնասիրություն*, 42: 25–30.

ունենում որևէ զգալի ազդեցություն:<sup>27</sup> Նման փորձը հաճախ բնութագրվում է որպես ՍԱԳ-ի և/կամ ԱԱԳ-ի միջև ինտեգրվածության և սոցիալական ու առողջապահական խնդիրների ընթացիկ կառավարման պակաս ծրագրի մեկնարկից և ավարտից հետո:<sup>28</sup> Այս մոտեցման շրջանակում ազդեցության գնահատման նպատակներից է սովորաբար ՇՄԱԳ-ի համար պատրաստել փաստաթուղթը, որը կապահովի հանքի մշակման շուրջ համաձայնության առակայությունը: Ավելին, ՇՄԱԳ-ի մեջ ինտեգրված լինելու պարագայում ԱԱԳ-ն և ՍԱԳ-ն հաճախ կենտրոնանում են կանխատեսման ասպեկտների վրա և չեն ընդգրկում մասնակցային գործողության բաղադրիչը:<sup>29</sup>

## Եզրակացություններ և առաջարկություններ

Հայաստանում չկան մանրամասն կարգավորումներ և ինստիտուցիոնալ հզորություն հանքարդյունաբերության սոցիալական և առողջապահական ազդեցությունների պատշաճ գնահատման համար: Բնապահպանական փորձաքննության ՊՈԱԿ-ը և առողջապահության նախարարությունը չունեն տեսական և գիտական գիտելիքները կամ փորձը ներկա օրենքին համապատասխան ԱԱԳ իրականացնելու համար: Առողջապահության և ներկա, և նախկին նախարարները պաշտոնապես նշել են, որ նախարարությունը չունի ԱԱԳ իրականացնելու գործիքներ կամ նույնիսկ հանքարդյունաբերական ծրագրերի հնարավոր ազդեցությունը բնակչության և համայնքների վրա գնահատելու հնարավորություն: Բացի այդ, Առողջության իրավունքի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին ուղղված նամակում Հայաստանի կառավարությունը նշել է, որ Հայաստանը չունի պատշաճ ԱԱԳ իրականացնելու համար պահանջվող չափանիշներ:

Չնայած առաջին հայացքից հազեցած թվացող իրավական շրջանակի գոյությանը, չկան կարգավորող մեխանիզմներ, որոնք կապահովեն որոշումների կայացման և ազդեցությունների գնահատման հարցերում ազդակիր համայնքների իրական մասնակցությունը, ինչպես սահմանված է օրենսդրությամբ:<sup>30</sup> Հանքի մշակման ընթացքում տեղի ունեցող վերաբնակեցման և փոխհատուցման մասին համաձայնությունները հիմնականում կայացվում են ծրագրի պատասխանատուների և

<sup>27</sup> João, E., Vanclay, F., & Den Broeder, L. (2011թ): [Emphasising enhancement in all forms of impact assessment: introduction to a special issue](#): Ազդեցության գնահատում և ծրագրի գնահատական 29(3): 170–80:

<sup>28</sup> Ֆրենկս /Franks/ և այլք (2009թ), Էստեվես /Esteves/ և այլք (2012թ):

<sup>29</sup> O'Faircheallaigh, C. (2010թ): [Public participation and environmental impact assessment: purposes, implications, and lessons for public policy making](#): Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուսումնասիրություն, 30(1). 19–27; Gillespie, R., & Bennett, J. (2012թ): [Valuing the environmental, cultural and social impacts of open-cut coal mining in the Hunter Valley of New South Wales, Australia](#): Բնապահպանական էկոնոմիկայի և քաղաքականության ամսագիր /Journal of Environmental Economics and Policy/, 1(3): 1–13:

<sup>30</sup> Համաշխարհային բանկ (2016թ), [Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում](#), ապրիլ:

իշխանությունների միջև համայնքների անդամների կամ այլ ազդակիր բնակչության միայն սահմանափակ մասնակցությամբ: Ոլորտում առկա գաղտնիության մշակույթը խոչընդոտ է օգտակար հանրային մասնակցության համար: Ընդհանուր համակարգի՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու համար պահանջվում են երկրորդային կարգավորումներ և/կամ ազդեցության գնահատման մասին ուղեցույցներ: Ընդունվելուն պես այս կարգավորումները և/կամ ուղեցույցները պետք է միմյանց վրա հղումներ կատարեն և ներառվեն օրինակելի պայմանագրերում: Սակայն երկրորդական կարգավորումների և սոցիալական ու առողջապահական ազդեցությունների գնահատման ուղեցույցների ընդունումը պետք է առայժմ սառեցնել մինչև կանոնակարգող գործակալություններն ունենան պատշաճ կարողություններ պահանջելու հանքարդյունաբերության սոցիալական և առողջապահական ազդեցությունների ավելի արդյունավետ մշտադիտարկում և կիրարկում (մանրամասն վերլուծության և առաարկների համար տես՝ Աշխատանքային փաստաթուղթ 5):

Հայաստանի ամերիկյան համալսարան  
Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն  
Մարշալ Բադրամյան 40,  
Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն  
+374-60-612520  
crm@aua.am  
crm.aua.am

**mlri.crm.aua.am**

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության  
կենտրոնի՝ Հանքարդյունաբերության  
օրենսդրության բարեփոխման նախաձեռնությունը  
(ՀՕԲՆ) ֆինանսավորվում է Թուֆենկյան  
հիմնադրամի կողմից:

**T U F E N K I A N**

FOUNDATION